ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАН

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N 5-144
«12» 01 2017թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի 2017թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:

Առդիր/13 թերթ

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«15» դեկտեմբերի 2017թվական թիվ 36

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ՝ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԼՈՒՅՍԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 38-ի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017թվականի նոյեմբերի 30-ի, թիվ 5 հերթական նիստի, թիվ 52 որոշումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Կնքել պայմանագիր՝ «Էկոմիքս» ՍՊԸ լիցենզավորված կազմակերպության հետ:
2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու կողմից հատկացված՝ 950 000 /ինը հարյուր հիսուն հազար/ դրամը, տրամադրել նշված կազմակերպությանը, համայնքի փողոցների խաչմերուկներում ցերեկային լույսեր տեղադրելու համար:
3.Աշխատանքներն իրականացնել՝ համաձայն պայմանագրի:
4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձականման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական դեկտեմբերի 15
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«18» դեկտեմբերի 2017թվական թիվ 37

## ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 38-ի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 18-ի, թիվ 6 հերթական նիստի, թիվ 57-Ա որոշումը.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Կնքել պայմանագիր՝ «ԿԱՌՈԼ» ՍՊԸ տնօրինության հետ, համայնքի ավագանու կողմից հատկացված՝158 000 /մեկ հարյուր հիսունութ հազար/ դրամի սահմաններում, համայնքի 0-ից 10 տարեկան երեխաներին ամանորյա նվերներ ձեռք բերելու համար:
2.Աշտական հանձնաժողովին՝ ձեռք բերել նվերները, կազմակերպել միջոցառում և կատարման մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից և գործում է մինչև 28 դեկտեմբերի 2017թվականը:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական դեկտեմբերի 18
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«20» դեկտեմբերի 2017թվական թիվ 38

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 49-ի առաջին մասի 3-րդ կետով, և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 19 դեկտեմբերի 2017թ. թիվ 01/05.1/5226-17 գրությունը, ազգային վիճակագրական ծառայության տարեկան հաշվետվություն ներկայացնելու մասին.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում առկա անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքներն իրականացնելու և տարեկան հաշվետվություն ներկայացնելու համար, ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի անասնաբույժին մասնակից դարձնել հանձնաժողովի աշխատանքներին:
3.Հաշվառման աշխատանքներն իրականացնել՝ 2018թվականի հունվարի 1-ից, 16-ը ընկած ժամանակահատվածում և մինչև հունվարի 17-ը հաշվառման ամփոփ տվյալները ներկայացնել ազգային վիճակագրական ծառայության՝ Արմավիրի մարզային գործակալություն:
4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում՝ 2018թվականի հունվարի 1-ից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական դեկտեմբերի 20
գ. Մրգաստան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մրգաստան
համայնքի ղեկավարի
2017թ. դեկտեմբերի 20-ի, թիվ 38
կարգադրության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ռաֆիկ Խաչատրյան /համայնքի ղեկավար/

Հանձնաժողովի անդամներ՝

Հովհաննես Հարությունյան /առաջատար մասնագետ, գյուղատնտես/

Սուսաննա Ղարիբյան /աշխատակազմի քարտուղար/

Վասիլ Հովսեփյան /համայնքի անասնաբույժ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«25» դեկտեմբերի 2017թվական թիվ 39

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՆԻՔԸ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 38-ի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 18-ի, թիվ 6 հերթական նիստի, թիվ 59 որոշումը.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Կնքել պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի բնակիչ Էդվարդ Խաչիկի Սմբաթյանի հետ:
2.Համայնքի ավագանու կողմից հատկացված՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամը, օգտագործել համայնքապետարանի տանիքի մասնակի վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:
3.Մշտական հանձնաժողովին՝ ձեռք բերել անհրաժեշտ նյութեր և սարքեր, կազմակերպել աշխատանքները և կատարման մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական դեկտեմբերի 25
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«25» դեկտեմբերի 2017թվական թիվ 40

## ԱՄԵՆԱՄՅԱ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 169-ի երրորդ մասով և հիմք ընդունելով Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանի դիմումը՝ իր չօգտագործված արձակուրդը օգտագործելու մասին.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանին տրամադրել նախորդ տարիների չօգտագործված արձակուրդի օրերից, 20 աշխատանքային օր տևողությամբ՝ 28 դեկտեմբերի 2017թվականից:
2.Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանի բացակայության ընթացքում նրա վրա դրված պարտականությունները՝ իր ցանկությամբ կկատարի Մրգաստանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սուսաննա Վանիկի Ղարիբյանը:
3.Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանը իր մոտ պահվող փաստաթղթերը հանձնի՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:
4.Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանը իր պարտականությունների կատարմանն անցնի՝ 01 փետրվարի 2018թվականից:
5.Հաշվապահին՝ կատարել վճարում օրենքով սահմանված կարգով:
6.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական դեկտեմբերի 25
գ.Մրգաստան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«26» դեկտեմբերի 2017թվական թիվ 41

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 35-ի առաջին մասի 24 կետով, Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 219-ի առաջին մասի 2-րդ կետով.

### ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.2017թվականի ընթացքում աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի հետևյալ աշխատակիցների նկատմամբ կիրառել՝ միանվագ դրամական պարգևատրում.
ա.Համայնքի ղեկավարի տեղակալ՝Հովհաննես Եղիշեյի Մկրտչյանին պարգևատրել 80.0 /ութսուն հազար/ դրամով:
բ.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Սուսաննա Վանիկի Ղարիբյանին պարգևատրել 80.0 /ութսուն հազար/ դրամով:
գ.«Մշակույթի տան» վարիչ՝ Մանուկ Ռաֆիկի Հարությունյանին պարգևատրել 70.0 /յոթանասուն հազար/ դրամով:
2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական դեկտեմբերի 26
գ.Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2017թվական թիվ 10-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարի 2015թվականի հուլիսի 7-ի թիվ 457-Ն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 14.11.2017թվականի թիվ 01/03.2/4739-17 գրությունը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի հաշվապահական հաշվառման քաղաքականության նախագիծը, համաձայն հավելվածի:
2.Հաստատված նախագիծը ներկայացնել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան համաձայնեցման:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական դեկտեմբերի 11
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2017թվական թիվ 11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 04 դեկտեմբերի 2017թվականի թիվ 01/04/4951-17 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործմանն ուղղված գործառույթների իրականացումն ապահովելու նպատակով, սահմանել պարտավորություններ:
2.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի տեղակալի հաստիքը զբաղեցնող աշխատակցի Հովհաննես Եղիշեի Մկրտչյանի նկատմամբ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական դեկտեմբերի 12
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«14» դեկտեմբերի 2017թվական թիվ 12-Ա

## ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի հոդված 33-ի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 16-ի, «2017թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 2 նիստի, թիվ 9-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 16-ի, «2017թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 2 նիստի, թիվ 9-Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումը.

01 բաժին 01 խումբ 01 դաս 4111 հոդվածից պակասեցնել 400.0 հազար դրամ
01 բաժին 01 խումբ 01 դաս 4241 հոդվածից պակասեցնել 200.0 հազար դրամ
08 բաժին 02 խումբ 03 դաս 4111 հոդվածից պակասեցնել 715.0 հազար դրամ
01 բաժին 01 խումբ 01 դաս 4112 հոդվածին ավելացնել 865.0 հազար դրամ
01 բաժին 01 խումբ 01 դաս 4237 հոդվածին ավելացնել 100.0 հազար դրամ
01 բաժին 01 խումբ 01 դաս 4267 հոդվածին ավելացնել 100.0 հազար դրամ
08 բաժին 02 խումբ 03 դաս 4112 հոդվածին ավելացնել 250.0 հազար դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական դեկտեմբերի 14
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» դեկտեմբերի 2017թվական թիվ 13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 77-ի երրորդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Անցկացնել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ամենամյա գույքագրում:
2.Գույքագրման հանձնաժողովի նախագահին՝ աշխատանքներն իրականացնել 2017թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 29-ը:
3.Աշխատանքի ավարտից հետո գույքագրման փաստաթղթերը ներկայացնել՝ համայնքի ավագանու հաստատմանը:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական դեկտեմբերի 18
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» դեկտեմբերի 2017թվական թիվ 14-Ա

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի հոդված 33-ի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 16-ի, «2017թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 2 նիստի, թիվ 9-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 16-ի, «2017թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 2 նիստի, թիվ 9-Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումը.
04 բաժին 02 խումբ 01 դաս 4111 հոդվածից պակասեցնել 360.0 հազար դրամ
01 բաժին 06 խումբ 01 դաս 4264 հոդվածից պակասեցնել 50.0 հազար դրամ
08 բաժին 02 խումբ 04 դաս 4239 հոդվածից պակասեցնել 100.0 հազար դրամ
08 բաժին 03 խումբ 02 դաս 4234 հոդվածից պակասեցնել 50.0 հազար դրամ
01 բաժին 06 խումբ 01 դաս 4239 հոդվածին ավելացնել 560.0 հազար դրամ
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական դեկտեմբերի 20
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» դեկտեմբերի 2017 թվական թիվ 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և իրականացնելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34 հոդվածի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.2017թվականի ընթացքում աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի, ինչպես նաև նրա ենթակայության տակ գտնվող «Մշակույթի տան» աշխատակազմին խրախուսել նրանց նկատմամբ կիրառելով՝ միանվագ դրամական պարգևատրում:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական դեկտեմբերի 26
գ. Մրգաստան